Քաղաքապետին յընթրիս, թարգմանն Լատինաց դիմեաց անդ և սկսաւ կոգել ընդ նոսա, սպառնացեալ զմեծամեծս, եդեալ 'ի մտի զերկուս իրս, կամ բարկացեալ նոցա յարուցցեն կռիւ, և կամ ջնջեսցեն զառաջին վճիռն, բայց նոքա լուռ և եթ կային, և նորա առաւել զայրացեալ էլ անտի և գնաց, և 'ի ձեռն երկրորդին իւրոյ առաքեաց զվիկանս Լատին վանաց, և նորա ընկեցեալ առաջի Դատաւորին ասէ, ծերունիք Լատինաց առաքեցին զսոսա առ քեզ, զի ինքեանք ունին մեկնիլ աստի 'ի վաղիւ, զի չէ օրէն այսուհետեւ մնալ նոցա աստ, եւ եթէ էիք 'ի Դատարանն, ամենեքեան ունէին գալ առ քեզ. Դատաւորն ոչ ընկալեալ զնոսա, ասէր՝ տալ ցՔաղաքապետն, զի 'ի տուն նորա էր, միթէ չեղե՞ւ ժամանակ ասէ գտանել զիս 'ի տեղւոջ իմում, այլ լրտեսեալ զճանապարհս իմ յարուցանէք վէճս 'ի տունս այլոց, զի անպատճառ գիտութեամբ եւ զօրութեամբ հրաւիրողաց գործին այսոքիկ։ Ընդոստուցեալ Քաղաքապետին ասէ՝ քաւ լիցի տէր իմ, զի կրօնաւորք սոցա յամառ և կամակոր են եւ գործեն զայսպիսի անարժանս. իբրեւ ետես Թարգմանն թէ չմերձենայ Դատաւորն՝ եթող անդ զվիկանս և մեկնեցաւ, և նոքա առաքեալ ընկեցին 'ի տուն նորա։

Եւ 'ի վաղիւ անդ յաւելին Լատինք զյանդգնութիւնս իւրեանց անպատեհ բանիւք, եթէ Հայք և Յոյնք ասեն՝ ետուն աքսորել զմէն մի Դատաւորս 'ի պատճառս կռուոյ իւրեանց, այլ Լատինք ոչ միայն զԴատաւորն, այլ և ըզՄիւֆթին, զնախիպն և զայլս բազումս տացեն տարագրել աստի։ Զհանդուրժեալ այլ եւս այլազգեաց այսպիսի մեծաբանութեանց, գրեցին զերկուս հանրագիրս յայտնի պատմելով 'ի նմա զյոյզս եւ զխռովութիւնս Լատին կրօնաւորաց, զմեծաբանութիւնս նոցին և զսպառնալիս աքսորանաց, զխնդիր Բեթղեհէմի և Ս. Յարութեան, այլովքըն հանդերձ, և ետուն կնքել ամենայն գլխաւորաց քաղաքին, ընդ որս և Քաղաքապետին, և Դատաւորն առանձին գրեաց առ Դենպետն մեծ, զմի օրինակն առաքեցին 'ի Դամասկոս, և զմիւսն 'ի Կոստանդինուպոլիս ('ի 20 Օգոստոսի)։

Իսկ փոխանակ Բդեշխին Երկթուղեան Իպրահիմ Փա-